

ԻՆՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են Դիմիտրի Մառիանիսի մեջ:

Օտարաբարացիք լինում են ուղղակի

Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաջօրեին 10—2 ժամ

(Բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարությունները ընդունվում են ամեն լիզուով:

Յայտարարությունների համար վճարում են խրատներ ըստ 2 կոպեկի:

„ՄՇԱԿ“

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. ըն

(ՏԵՍՆԵՐՈՐԻ ՏԵՐԻ)

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոպագանդայով ՄՇԱԿՈՐ ՕՐ (բացի տոն և տոներին հետևող օրերից):

ՊՐԻՆԻՍԻՍՄԱՆ. I. Տեղեկական կարգադրություններ, II Առաջնորդող յոգուածներ, III Ներքին տեսություն, IV Արտաքին տեսություն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆեյհետոն և Բանասիրական, VIII Յայտարարություններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ, կես տարվանը 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ., երեք ամս. 3 ռ. կրկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլ:

Գրվել կարելի է խմբագրություն մեջ հետևյալ հասցեով. Тифлисе, редакция «Мшак».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԿԱՎՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական կյանքը, — Ն. Կ. Բ. ին տեսություն: Նամակ երևանից: Նամակ խմբագրից: Ս. Բ. ին տեսություն: Գերմանիա: Յրադատ: Յայտարարություններ: Բ. Կ. Ն. Կ. ին տեսություն: Նամակ Ս. Պետերբուրգից:

ՈՒՍՈՒՄ ԱՌԱՋ ԿԻՆՏՈՆԵՐ

Ուսումնական կյանքը, թե միջնակարգը և թե մանուկանոց բարձրագույնը իր կրթողական ներգործությունն ունի ամեն ազգի նոր սերունդի վրա, ուսումնական մարդը միշտ և ամեն տեղ ջոկվում է անկիրթ, անուս մարդուց:

ԲԱՆԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ

ՆԱՍԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Նոյեմբերի 23-ին

Այժմ հայ ուսանողական վրա յարձակվել, ուսանողներին բարկացնել, որոշարարել, հաղթող ու մի իրապետ ու անիրապետ պահանջները լրանցել, ժամանակ առ ժամանակ մինչև անգամ գոյվել, կարծես, մեղանում մօ դա է դարձել:

Ես իմ կողմից ամենին, գիտաբարությունը չունեմ Ս. Պետերբուրգի հայ ուսանողական վրա ոչ չարձակվելու, ոչ նրան զրգռելու, դեպի ինքնաճանաչությունը, միայն թե ես կը կամենայի իմ այս փորձիկ նամակով փոքրիկ շտապ ծանուցություններ մեր ընթերցողներին մեր ապագայ գործիչների հետ, մեր այժմյան հայ ուսանողական հետ:

Գուցե մեր ուսանողներից ոմանք այս կամ այն բանը վերաբերեն իրանց, գուցե նրանցից շատերը ներդանեն և այլն, այնուամենայնիվ ես չեմ աշխատի տեսնում ու լսածս թագնել, միայն աչքի առաջ ունենալով ոչ անհասկանալի, այլ ամբողջ ուսանողական:

Այսպես ինչպե՞ս ուսանողներին առհասարակ կարելի է բաժանել երեք կարգի. նրանք, որոնք մայրենի լեզու փոքրիկ շտապ իմանում են, երկրորդ այն ուսանողները, որոնք թեև հայերեն լեզու չեն իմանում, բայց սրտով ցանկանում են սովորել և երբեք ոչ չ. լեզու իմացողներ, ոչ իրանց ազգի վրա որ և ինչ գաղափար ունեցողներ և ամենին անտարբերները դեպի ամենը, մանավանդ ինչ վերաբերում է հայերին և Հայաստանին, բացի ընդհանուր մարդկային գաղափարների և այլն:

Վերջին կարգի ուսանողները իր թե հիմնականում են, իսկ առաջին երկուսը — ազգասերներ, կամ ինչպես նրանց հիմնականությունը ա-

յի բարք ու վարքով իր մտածողությունն եղանակով:

Հայերի մեջ, դժբաղդապես այդպես է: Հայը, ինչքան էլ ուսումնառի, բարձրագույն դպրոցներում ուսումը աւարտել, գիտնական տիտղոս ստանալ, կեանքը մոնետրոպայ կամ այն հասարակական պաշտոնը վարել, — նա դարձնալ մեծ է նոյն անկիրթ, անասնաճ կրքերով մի մարդ, նոյն կ ի ն տ օ:

Լօգիկա, առողջ դատողություն ասած բանը, ազնիվ վարմունք, կրթված մարդու բարք ու վարք, խօսելու կամ գրելու վայելույժ, — այդ բոլոր բաներից ոչինչ էլ սովորում հայը, թեկուզ համալսարանի կանդիդատ լինե՞ր...

Տխուր տպավորություն է գործում մարդու վրա, երբ նա համոզվում է, որ ստիպված է ապրել մի հասարակություն մեջ, որ ամբողջությամբ բաղկացած է կ ի ն տ օ ն երից, մի կողմից առնու և միւս կողմից ուսում առած կիսուսներից...

Դուք պատահում էք մի խուլ փողոցում մի կինտոհ, որին, օրինակ,

խնդրում էք բաղաբառի կերպով որ ձեզ ճանապարհ տայ. նա ձեզ ճանապարհ է տալիս, դուք այդ պատճառով թող էք տալիս ձեզ մի նկատողություն անել նրան. և յանկարծ, առանց որ և է պատճառի այդ մարդը, իբր պատճառ խան ձեր առած նկատողություն, սկսում է յիշցներ տալ ձեզ, ձեր հօրն ու մորը, ձեր կնոջն ու երեխաներին:

Նոյն լօգիկա, նոյն առողջ դատողություն, նոյն ազնիվ վարմունք յատուկ է և բարձրագույն ուսում ստացած հային թե կեանքի ամենօրեայ հանգամանքներում, թե գործերի մեջ, թե գրական ու դպրոցական ասպարիզում:

Հայը, այդ ուսումնառած կիսուսն, որ երապացու առջև կամենում է իրան կրթված մարդցոյց տալ, գրել է օրինակի համար, մի գիրք, թարգմանել է մի գրուածք: Դուք թող էք տալիս ձեզ քննողական աչքով նայել այդ աշխատանքի վրա, և ահա, որպես պատասխան ձեր տրած անկողմնապահ քննադատություններ, կը թափվեն ձեր

զարգացման առեւ ստորին աստիճանի վրա էին, քան թե այժմյան 4-րդ դաստիարակչական դարից, ինչու են այդպես կարծում, բացառությամբ չլիտուանական վերջին խօսքի հիման վրա ամբողջ մարդկությունը գնում է դեպի առաջ... նոյն հիման վրա հաստատվում է, որ այժմյան երապացույց լեզուները թե ուսանողներ և թե այլ ուսուցիչ կատարելագործված են, քան թե հին յոսնար է նրա, մի և նոյն հիման վրա կարող ենք տեսնել, որ հասկանալիությունը առեւ ստորին աստիճանի վրա էին, քան թե հիմա, որպես պատասխան ձեր տրած անկողմնապահ քննադատություններ, կը թափվեն ձեր

զարգացման առեւ ստորին աստիճանի վրա էին, քան թե այժմյան 4-րդ դաստիարակչական դարից, ինչու են այդպես կարծում, բացառությամբ չլիտուանական վերջին խօսքի հիման վրա ամբողջ մարդկությունը գնում է դեպի առաջ... նոյն հիման վրա հաստատվում է, որ այժմյան երապացույց լեզուները թե ուսանողներ և թե այլ ուսուցիչ կատարելագործված են, քան թե հին յոսնար է նրա, մի և նոյն հիման վրա կարող ենք տեսնել, որ հասկանալիությունը առեւ ստորին աստիճանի վրա էին, քան թե հիմա, որպես պատասխան ձեր տրած անկողմնապահ քննադատություններ, կը թափվեն ձեր

զարգացման առեւ ստորին աստիճանի վրա էին, քան թե այժմյան 4-րդ դաստիարակչական դարից, ինչու են այդպես կարծում, բացառությամբ չլիտուանական վերջին խօսքի հիման վրա ամբողջ մարդկությունը գնում է դեպի առաջ... նոյն հիման վրա հաստատվում է, որ այժմյան երապացույց լեզուները թե ուսանողներ և թե այլ ուսուցիչ կատարելագործված են, քան թե հին յոսնար է նրա, մի և նոյն հիման վրա կարող ենք տեսնել, որ հասկանալիությունը առեւ ստորին աստիճանի վրա էին, քան թե հիմա, որպես պատասխան ձեր տրած անկողմնապահ քննադատություններ, կը թափվեն ձեր

գլխին կինոսոյական հայհոյանք, յիշոցներ, բամբասանք, ամենատեղ զրպարտութիւններ, ձեր անձնական կեանքի այլանդակված նկարագիրը....

Հարցնող լինի, ի՞նչ կապ կայ մի գրքի կամ թարգմանութեան կրիտիկայի և մարդու անձնական կեանքի մէջ, այն էլ հազար և մի զրպարտութիւններով համեմատեալ.... Այնչէս կապ չը կայ ճշմարիտ ուսում առած, կրթված մարդու համար, բայց կինոսոյական դեղը մեծ կապ է տեսնում այդ բաների մէջ....

Տեսուչը ասում է ուսուցչին՝ խնդրեմ փոխեցէք ձեր դասատւութեան մեթոդը, որպէս ձեռնարկ ընդունեցէք այս գիրքը: «Ի՞նչ ինչպէս էք համարձակվում խորհրդներ տալ, այն ինչ ես գիտեմ որ դուք ձեր կնոջը ծեծում էք» պատասխանում է ուսուցիչը....

Ահա այս է մեր հայ հասարակութեան կինոսոյական լոգիկա, ահա այս է մեր ուսում առած կինոսոյական առողջ դատողութեան օրինակը կեանքի ամեն հանգամանքներում և մասնաւոր կեանքի յարաբերութիւնների մէջ և դրպրոցների ու լրագրութեան մէջ....

Դրանից յետոյ ի՞նչ զարմանալի բան որ մեր կեանքը տասնեակ տարիների ընթացքում մազի չափ առաջ չէ գնում, ընդունակ չէ առաջադիմութեան, դատաւարութեան է մշտական անշարժութեանը:

Գիտնականին, նա ասում է. գուցէ որ և ից է Գիւլօրիէ այդ կարծիքի է առնաարակ հայոց լեզուի մասին, հայերի ընդունակութիւնների մասին և այլն, բայց «Нов. Вр.»-ի կամ այս ինչ լրագրի ֆէլիտոնիստը ահա ինչ է գրում....

Այսքանին էլ, ընթերցող, կարծեմ բոլորովին բաւական է, որ մի գաղափար ստանանք մեր հայ ուսանող կոմսոպոլիտի վրա: Անհրաժեշտ է ճշմարտութիւն է (գոնէ ինձ համար), որ հայ ուսանողը կոմսոպոլիտ է, ինչպէս վերև յիշեցի, միայն նրա համար, իր ինքն իրան չէ ծանաչում, այսինքն ծանօթ չէ ամենին ոչ իր ազգի անցեալի, ոչ ներկայի, ոչ լեզուի հետ. նա համոզված է, որ հայոց ազգը մի ամենաանապիտան ազգ է, նա ամաչում է իր ազգի դաւակ կոչվել և դարձել է կոմսոպոլիտ:

Նրա նման չէ մեր ուսանողութեան այն մասը, որ բաւականին լաւ է իմանում իր մայրենի լեզու, փոքր ինչ ծանօթ է ազգային պատմութեան հետ. ուսանողութեան այդ մասը կազմում են ըստ մեծի մասին գաւառացիք: Պէտք է ցաւօք սրտի նկատմամբ, որ դրանք կազմում են ուսանողութեան փոքրամասնութիւնը, ասում եմ՝ ցաւօք սրտի, որովհետեւ «հայերէն լեզուն» հայ ուսանողի ձեռքում միշտ կարող է չափ ուժեղ գործիք լինել: Թէեւ ես այն կարծիքի եմ, որ լեզու իմանալը դեռ չէ ցոյց տալի ազգասիրութիւն, բայց, այնուամենայնիւ, եթէ հայը իմանում է իր մայրենի լեզուն և խօսում է, չէ թաղցնում, արդէն այդ ցոյց է տալի, որ նա փոքր ի շատէ սիրում է իր ազգը.... (Գիտադրաբար գտնվում են և այնպիսի ուսանողներ, որոնք, իբրև գաւառացիք, չեն կարող չիմանալ հայերէն լեզու, այնուամենայնիւ, երբ հայերէն են խօսում հետները, ձեզ տափակ պատասխանում են. «Я по армянски не говорю»):

Հայ ուսանողութեան այս դասակարգը (հայերէն լեզու իմացողներ), գոնէ որքան ես ծանաչեցի, կարծում է, որ եթէ հայերէն լեզուն իմանում է, մի քանի տեղեկութիւններ ունի հայոց պատմութիւնից, սերուն ամենին պատրաստ է

Հայոց հասարակութիւնը նման է այն առասպելական հսկային, որ անդադար աշխատում էր, բայց նրա արած աշխատանքը անդադար քանդվում էր: Իսկ ճշմարիտ, մի անտանելի, յուսահատական աշխատանք է. սերունդներ սերունդների ետեւից ուղարկել համալսարաններ և տեսնել որ այդ բոլոր սերունդները միշտ վերադառնում են նոյն անկերթ, նոյն անազնիւ, նոյն իղիօտ, գաղան կինոսոյներ....

Գ. Ա.

ՆԵՆՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Նոյեմբերի 10-ին

Նրա առաջին անգամ լսել տարածվեց, որ մեր պարբերական թերթերի թիւը մէկով էլ պիտի աւելանայ—որ Նրեանի մէջ պիտի հրատարակվի «Պատկ» անունով սի չարթաթերթ, զբաղվեցան մեզանում կարծողներ, թէ այդ լրագիրը իբրև գաւառական մի թերթ որքան և իցէ օգուտ կարող է բերել հայ ընթերցող հասարակութեանը, հայ մամուլին միջոց տալով աւելի մօտիկ ծանօթանալու գաւառական կեանքի այս և այն կողմերին: Այդ իսկ անկախութիւնով էլ մի քանի հայ ուսանողներ Մոսկովայի, առանց մի բոլորէ անգամ կորցնելու, շտապեցին ողջունել այդ թերթի ծնունդը: Բայց այն մարդիկ—և սոքա ընթերցողի մեծագոյն մասն էին,—որոնք զբաղաւթիւն էին ունեցել կամ անձամբ, կամ լրագրութեան միջոցով ծանաչելու այն անձին, որ պատրաստվում էր հրապարակ դուրս գալ իբրև այդ թերթի խմբագիր, չէին կարողանում թոյլ տալ իրանց հաւատաւուն, որ «Պատկ» կարող է արդարացի մի այդպիսի անկախութիւն, որ պ. Բաբաջանեանը ընդունակ կարող է լինել ազնուաբար կատարելու մի խմբագրի պաշտօն,

հասարակական գործունէութեան համար.... Եթէ, իրաւ, ես չեմ սխալվել, եթէ մեր ուսանողները այդ աստիճան ինքնահաւան են, որ ապագայում ազգին ծառայելու համար բաւական են համարում իրանց այն ոյժերը, որ ունեն, ես իմ կողմից կասեմ, որ դրանք ոչնչով չեն զանազանվի մեր այժմեան գործիչների մեծամասնութիւնից....

Այժմ դառնանք դէպի այն ուսանողները, որոնց մէջ ինքնաճանաչութիւնը շատ ուշ է զարթել և այժմ մեծաւ ուրախութեամբ պատրաստ են մայրենի լեզուն և ազգային պատմութիւնը ուսումնասիրելու: Իմ կարծիքով, հայ ուսանողութեան հէնց այս մասը արժանի է առանձին համակրութեան. հէնց այս դասակարգը մեզ խոստանում է գեղեցիկ ապագայ. ես անձամբ աւելի հաւատում եմ սրանց, ես մինչև անգամ համոզված եմ, որ հէնց այս դասակարգից դուրս կը գան մեր անձնուէր գործիչները: Մի մարդ, որ անտարբեր է եղել դէպի ազգային շահերը մինչև չափաւար, սխալում է հետաքրքրվել նրանցով, կասկած չը կայ, որ մի առանձին սէր պէտք է յարուցվէր նրա մէջ դէպի իր ազգը....

Այս դասակարգում նոյնպէս տեսնում ենք մի քանի հայ ուսանողներին, որոնք փոքր ինչ առաջ յայտնի էին որպէս «կոմսոպոլիտներ»: Նրեի, վերջ ի վերջոյ հասկացել են թէ իրանք ինչ տեսակ կոմսոպոլիտներ են եղել և ինչու....

Հիմարիան ասած, ես զարմանում եմ, երբ մեր գրողները նկարագրում են հայ ուսանողութիւնը աստափելի գոյներով: Պարոններ, ինչու էք ասում, որ հայ ուսանողները ամենին առանձնացած կեանք են վարում, որ հայ ուսանողները ոչնչով չեն հետաքրքրվում, որ... և այլն և այլն, ինչ իրաւունքով, ինչ հիման վրա դուք հաստատում էք, որ իբր թէ հայ ուսանողը ամենին անտարբեր է դէպի չղափարաբան կեանքը.... Ինչու դուք չէք հետաքրքրում միւս ուսանողների կեանքը: Գուր որոնում էք իղէալներ հայ ուսանողութեան մէջ և չէք գտնում, բայց դուք նոյն իսկ ժամանակ չէք որոնում մի և նոյն իղէալներ Եւրոպայի ուսանողների մէջ. դուք մոռա-

նա այդ թերթը դարձնելու չէ անձնական ամենացած հաշիւների օրգան: Եւ դժբաղդաբար շատ չանցած՝ ստիպված ենք խոստովանելու, որ այդ վերջին կարծիքն սպասածիցն աւելի ստուգուած թիւն երեցեալ: Նրեցեալ, այո, որ հրատարակել զգրականական, պատմական և մանկավարժական մի թերթ, ինչպէս «Պատկ» է կոչվում, պ. Բաբաջանեանցի հասկացողութիւնով նշանակել է և պիտի նշանակի կամ անամթաբար զրպարտել և հայտնել խմբագրի չը սիրած մի քանի անձնաւորութիւններին, կամ ամենատարբեր կերպով չորոգորթել այնտեղ, որտեղից անձնական շահեր և անկախութիւններ կարող է ունենալ: Ընթերցողները, կարծեմ, յիշում են, որ «Պատկ» սկզբնական համարներից շատերը նուիրվեցան Բէկնազարեանցի, Պեռնանցի, մի երկու եկեղեցականների և «Մշակի» ու նրա թղթակիցների փառաբանութեան: Այժմ ըստ երեւոյթին այդ անձնաւորութիւնները, բացառութեամբ վերջինների, դադարել են «Պատկ» նիւթ լինելուց, կամ աւելի լաւ է ասել առժամանակ դադարել է նրա առաջին մասը, որովհետեւ պ. խմբագիրը սաստիկ զբաղված է երկրորդ մասով—չորոգորթութեան մի շարք յօդուածներ էլ միաժամին նուիրելով: Գուր սեպտեմբեր ամսին, երբ էլ միաժամին ձեռնարանի ուսումն սկսեալ և բացվեց եօթներորդ դասառումը, «Պատկ» իր—եթէ չեմ սխալվում 25 համարի մէջ, դուրս թողեց մի դիտողութիւն այդ ձեռնարանի եօթներորդ դասարանի վրա, որի մէջ իր սովորական փիլիսոփայական կէտից նկատելով՝ զբաղում էր, որ ձեռնարանի ուղղութիւնը կրօնական լինելով, բացվելի դասառումն ուսումնը մեծ մասամբ աստուածաբանական լինելով՝ ազգին օգտակար չէ կարող լինել, որ ընդ մէջ գործող անձինքը անհայտ մարդիկ են, որոնք վրա ազգը բոլորովին վատած չէ կարող լինել, որ ընդմիջէս հնա ուսուցիչները համարեալ զուրկ ու պոռճախից ժողոված տգէտ անձինք են, անհամապատասխան իրանց կոչման և այլն: Պէտք է ի նկատի առնել, որ այդ յօդուածը գրելով պ. Բաբաջանեանցը, մտքից անգամ չէր անցկացնում, որ մեր քաղաքային վարչութեան խորհրդարանում նրա զբաղմունքը կարող է խախտու և անհաստատ դառնալ, այլ և այլ խնդիրներ կարող էին յարուցվել և վատ հետեանքներ գուշակել տալ: Այդ անցքերից յետոյ պարոնը մի քանի անգամ էլ միաժամին գնաց, և ինչպէս հաս-

նում էք, որ այժմ ոչ թէ միայն հայ ուսանողութեան, այլ առհասարակ երիտասարդութեան իղէալը դարձել է «ոսկի և ասպարէզ», դուք նկարագրում էք ամենաւառ գոյներով մեր ընտանիքը, մեր կնոջը իբրև մօրը, և ուղում էք իբր թէ գտնել գաղտնիքի բանալին և դուք ձեր աչքերը խփել էք և չէք ուղում տեսնել և հետագոյն «հանգուցեալ» Տօյտովի այն սխալմը, որ բաւականին գնահատեց ուսաց մամուլը, այն սխալմը, որ անկասկած նպաստում էր ամեն տեսակ իղէալների արմատից ոչնչանալուն....

Այս տղերքով մենք չենք ուղում արդարացինել հայ ուսանողութիւնը, բայց նոյնպէս և մեզ իրաւունք չէինք տալ դատաւարտելու նրան այնպէս, ինչպէս անում է պ. Յաղուբեանը (բայց դրա մասին մի այլ անգամ) կամ պ. Մեղեանցը, Կ. Ն.... միայն այսքան կասեմք, որ հայ ուսանողը հրաշագործ չէ....

Պէտք է խոստովանվենք նոյնպէս, որ սխալ կարծիք է թէ՛ քրմերը մինչև այսօր չարունակում են իրանց գոյութիւնը ուսանողութեան մէջ: Ես անձամբ վկայում եմ, որ այժմեան ուսանողութիւնը ք ո ղ ո Ր ո Վ ի ն ազատ է առաջվայ քրմերից, որոնք այժմ միայն պատմական անձնաւորութիւնք են համարվում: Այո, հայ ուսանողութիւնը ազատվել է քրմերի խնամատարութիւնից, ուրեմն և նրանց ազդեցութիւնից: Իրանց ազդեցութիւնը ուսանողութեան վրա: Ամեն մի ուսանող կարող էր հերքել քրմերի էութիւնը, իսկ հերքել առհասարակ քրմապաշտութեան վատ հետեանքները ի նկարի էլէր կարող: Իմ կարծիքով, այդ յօդուածները թէ՛ն դուրս չէին ծայրաւերջութիւնից, այնու ամենայնիւ պէտք է բա-

տատ աղբիւրից լսեցինք և ստուգեցինք, յաջողել է Մանկունու հետ կապել պայման, որով առաջիկայ ուսումնական տարում արվում է իրան ձեռնարանի ութներորդ դասառում մէջ փիլիսոփայութեան դասեր, չարթաթը չորս դաս, տարեկան երկու հազար ռուբլ ռոճիկով: Այդ պայմանը կապելուց յետոյ էր ահա, որ «Պատկ» փոխելով հանգամանքների հետ և իր լեզուն, սկսեալ գովել ու դուռառել էլ միաժամին, իսկ 33 համարում ընթերցողները արդէն կարողացին «Գէորդեան ձեռնարանի մասին» վերնագրով առաջաւոր յօդուածի մէջ հետեալ խօսքերը. «Գէորդեան ձեռնարանը մի պայծառ և լուսաւոր կէտ է ոչ միայն հայոց, այլ և ամբողջ կովկասեան ազգաբնակչութիւնների համար... նոյն իսկ ասիական քաղաքակրթութեան պատմութեան մէջ առաջնակարգ տեղերից մէկը կարող է բռնել նա... Հայաստանի ռոգեղոր կենտրոնակայքում մի այդպիսի բարձրագոյն ուսումնարան ունենալը շատ և շատ մեծ բան է, աւելի մեծ, քան թէ սովորաբար կարծվում է: Սակայն չը նայելով այդ ամենին, մեր լրագրութիւնը ստանութեամբ է վերաբերվում դէպի նա, մինչև անգամ թշնամութեամբ է վարվում նրա հետ, ինչպէս որ փորձերը մինչև հիմայ ցոյց են տուել... այդ թշնամութիւնը անտեղի յարձակման առարկայ են արել մի հիմնարկութիւն որով հայոցութեան հետ միասին կարող է պարենաւ և ամբողջ Ասիան.... ձեռնարանը ցոյց տուեց, թէ նրա մէջ պատրաստվում են ոչ թէ կղերական հոգով զանգուած, խմորված (25 №-ից յետոյ են այս խօսքերը) արարածներ, ինչպէս սիրում է հաւատացնել Գր. Արծրունին, այլ ճշմարիտ քրիստոնէական ազգային ոգեով կրթված հայեր... Վերջապէս յօդուածագիրն այն էլ գիտէ, որ Գէորդ Ի. հայրապետական աթոռի վրա բարձրանալիս Մայր Աթոռը բացի ոչինչ չունենալուց դեռ 40,000 ռուբլի պարտք ունէր, որը բոլորը վճարելուց յետոյ, մի գումար էլ յետ է ձգում: Մենք չենք զարմանում, եթէ «Պատկ» (25 №-ից յետոյ 33 №-ում) Ասիայի և մինչև անգամ Ափրիկէի քաղաքակրթութիւնը էլ միաժամին ձեռնարանից ապաստի, որովհետեւ խմբագիրը պ. Բաբաջանեանցն է. չենք զարմանում, եթէ էլ միաժամին այդպիսի մի թերթ «Արարատի» շարունակութիւն անել շուտով յաջողեց, մեզ զարմացնում է միայն յիշել յօդուածի մէջ էլ միաժամին թերթադրված այն բոլորը, որ իբր Վ. Ն. կաթողիկոսը էլ միաժամին ժա-

ւակային նպատակին հայ ուսանողների ինքնաճանաչութեան, ազատ գործունէութեան զգացմունքի զարգանալուն:

Ուղում էի մի քանի խօսք անել մեր հայ ուսանողութիւնի մասին ես, որոնք թուով մինչև 5 են, բայց ցաւում եմ, որ անձամբ ծանօթ չը լինելով նրանց հետ, չեմ կարող իմ սեպական կարծիքը յայտնել: Ինչպէս լսել եմ (և երևում է) մեր յարգելի օրիորդները մեր «կոմսոպոլիտների» ազդեցութեան են ենթարկվել, բայց յուսով ենք, որ... կոմսոպոլիտական բանակը երկար չի գըրաւի մեր օրիորդներին: Ինչ և իցէ... Կարծեմ, ոչ չընդհանուր մարդկութեան» սկզբունքները, ոչ զգիտութեան վերջին խօսքը՝ մարդուն չեն պարտաւորեցնում մոռանալ իր մայրենի լեզուն, ուրեմն մեր օրիորդները յանուն չընդհանուր մարդկութեան ինչու իրանց մայրենի լեզուն աւելորդ բեռը պէտք է համարեն....

Զարմանալի երևոյթ, որը չի նկատվում ոչ մի ուսեալ օտարականի մէջ....

Պետերբուրգի նորութիւններից մինն էլ այն է, որ բոլոր բարձրագոյն ուսումնարաններում, որտեղ ուսանում են հայ ուսանողները, այսուհետեւ կարդացվում է «Աստուածաբանութիւն» հայերէն լեզուով. երէկ առաջին անգամ կարդաց (Строительное Училище-ում) հայր Պատկանեանը: Հայ ուսանողների շատ գոհ են մնացել տէր-հօր խելացի և կրտսերական հայացքներից: Փառք Աստուծոյ, իսկ մենք փոքր ինչ վախում էինք....

Վանանց «բժշկական կուրսերի» երկրորդ կուրսը, ինչպէս ասում են, կուրսերի վարչութիւնը փակել է այն պատճառաւ, որ ուսանողահիւները պայման են կապել չայցելել պ. Բակապի լեկիաները: Հազիւ թէ այսպիսի մի նշան պատճառ առիթ կը տայ կուրսերի վարչութեանը երկար յանդիմանելու ուսանողահիւներին:

Մ Ի ր զ

մանկութիւն 40,000 ռուբլի պարտքի մէջ է գտնուել մեր Մայր Աթոռը, և որ այդ պարտքերը վճարելուց յետոյ մի յայտնի գումար էլ յետ է ձգել: Երբի էջմիածինը մոռացել է, որ իր պաշտօնական Արարատ անապիւրդ անցնել տարուայ հոկտեմբերի տետրակով հաշիւ էր տուել և այդ հաշիւի մէջ ասված էր, թէ Վ.Ե. Կաթողիկոսի էջմիածին ժամանած միջոցին Աթոռի գանձարանի մէջ գտնված է եղել 3,835 ռուբլի 48¹/₂ և այնտեղ պարտքի մասին ամենին խօսված չէ: Արարատի հաշիւ վրա հիմնվելով մենք միայն կամեցանք երկու խօսքով ցոյց տալ Աթոռի յիշեալ պարտքի մասին «Պատկի» պօստաւոր ստույգ, բայց, թէ յիշեալ այդ հաշիւն էլ հաշիւ լինելուց շատ հեռու է, և թէ այն գումարը, որը այժմ գտնվում է Աթոռի գանձարանում, դա՛րձեալ Աթոռի ունեցած գումարն էր, որ բանկերում չահեցվում էր, — բացի մեծ աղմուկ հանող ճաշոցադրութիւնը — մի առանձին անգամ ցոյց կը տանք աւելի մանրամասնօրէն և ճշտութեամբ: Բայց, թէ էջմիածինն էլ կը սիրի արդեօք ճշտութիւն և ճշմարտութիւնը, այդ մեր յօդվածից յետոյ կը տեսնենք:

ՆԱՄԱԿ ԽՐԱԳԻՐԻՆ

Թիֆլիս, 1-ին դեկտեմբերի

«Մշակի» անցեալ № 211 համարի մէջ ի շարս ներքին լրոյց ինձ անծանօթ քաղաքականութեամբ մեծապատիւ պ. Սանասարեանցի պատիւը չօգտփող մի լուր հրատարակած էիք, որ քան հասկացայ զիս առիթ ընենելով անդ: Կարի հետաքրքրական թուեցաւ ինձ տեսնելով նմանօրինակ ապարժէք լրոյ մը հրատարակութեանը, ըստ որում ես տեղեկութիւն և կամք ունեցած չեմ երբեք և ոչ էլ մի որ և է մէկին ներշնչած առ այդ հրատարակութիւնը, զի դժգոհ չեմ պ. Սանասարեանցէն և ոչ գանգատ յայտնած ընդդէմ նորա թէ՛ չիմ նամակին և հեռագրին չը պատասխանեց և այնչա, այլ ընդհակառակը եթէ պ. Սանասարեանցը մերժէր իսկ զիս իրեն սան ընդունելէ, չը նայելով, որ իմ այնչափ ուսանելու ձգտումներս և աշխատութիւնքս ապարդիւն պիտի մնան, տակաւին չը պիտի ներէի, որ ուրիշներն իմ պատճառով ստուեր ձգեն մի այնպիսի անձնաւորութեան պատուոյն, որ իր հանրածանօթ ազգասիրական գործերովը օգտակար եղած է միշտ հայրենեաց և հետեալքար յարգելի հայ հասարակութեան. թող թէ անյոյս չեմ ընաւ և դեռ գեղեցիկ յոյսեր ունիմ առ նա իմ գործին իրագործելուն մասին: Եթէ կը հաճիք տեղ տուէք իմ երկտողին ձեր «Մշակի» մէջ:

Գ. Զինգիբեհան

ԸՄՏԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Լրագիրներէ մէջ կարդում ենք հետեւեալ թղթակցութիւնը: Նորերումս իշխան Բիսմարկ ծանր յարձակումներ կ'ընէր ինքեան Բելլիկ լը-րագրութեան կողմից այն պատճառով, որ չեկաւ Բելլիկ ներկայ գտնվելու պատգամաւորներ ժողովի վիճարանութիւններին առեւտրական միջնորդութեան բերդեփոխ մասին, իր բացակայութիւնը հիւանդութեամբ արդարացնելով, մինչդեռ ինքը զընաց որսի: Իշխանի լրագիրները հերքում են այս վերջին փաստը, բայց որովհետեւ Բիսմարկ բազմաթիւ բարձրաստիճան անձանց որսի էր հրաւիրել, հաւանական է, որ ինքը չընդունեց այդ հիւանդին, այլ իր փեսան, որ նոյնպէս ապրում է Ֆրիդրիխ-րուէի մէջ: Իշխանի բացակայութեան մասին շատ բան են խօսում Բելլիկի մէջ, բայց ճշմարիտ է միայն այն իրողութիւնը, որ նա պարապելու համար Ֆրիդրիխսթեյնի մէջ աւելի շատ ժամանակ ու-

նի, քան թէ Բելլիկի մէջ, որտեղ անգա-գար խանգարում են նրա պարագմունքներին: Ամարանոցի մէջ նրա միակ զուար-ձութիւնը ամենօրեայ զբօսանքն է, որ նա Բելլիկի մէջ չէ անում, որովհետեւ իշխանը չէ սիրում անդադար երեւալ հասարակութեանը: Որովհետեւ Բելլիկի և Ֆրիդրիխսթեյնի մէջ ընդամենը հինգ ժամկէտ չկայ, նա հեշտութեամբ կարողա-նում է պահպանել իր յարաբերութիւնները Բելլիկի հետ և միջնորդները անգա-գար նրան այցելում են, այնպէս որ իշխան Բիսմարկը աւելի իրաւունք ունի փոխա-բայ համարվել, քան թէ Ֆրանսիական վա-ղեմի միջնորդ լուէրը:

Իշխանի այցելող հիւանդին ոչ մէկը այնքան աղմուկ չը հանեց, ինչպէս Ֆրանսիական դեսպան Սեն-Վալիէ, որ այցելեց իշխանին միաժամանակ Փարիզի գերմանա-կան դեսպան իշխան Զօհենլօֆի հետ: Պետական այդ մարդկերանց խորհրդակցութիւնները անկասկած քաղաքական բը-նաւորութիւն ունենին և նրանց մասին միայն ենթադրութիւններ կարելի է անել: Մի քանի լրագիրներ լուրեր տարածեցին, իբր թէ Ֆրանսիան և Աւստրո-Ունգարիան դաշնակցութիւն են կապել, որի համեմատ Ֆրանսիան պարտաւորվում է պաշտպանել Աւստրիայի քաղաքականութիւնը թէ արեւելեան գործերի և թէ ուրիշ նշանաւոր հարցերի վերաբերութեամբ: Հաստատ տեղեկութիւններ հաւաքելուց յայտնեցաւ, որ այդ լուրը կատարելապէս հնարված էր: Իշխանի բարեկամ շրջանների մէջ հաւա-տացնում են, որ այդ խորհրդակցութիւն-ները վերաբերում էին միմիայն Ֆրանսիա-կան հարցերին:

Կոմս Լացֆելդին արտաքին գործերի քարտուղար նշանակելու մասին թղթակցեց հաստատ աղբիւրներից տեղեկացել է, որ պալատական շրջանների կողմից նրա դէմ գործ դրած ինտրիգները փոքր չի շատէ աջողվել են: Կայսրը, որ այդպիսի դէպ-քերում միշտ հաւանութիւն է տալիս իշ-խան Բիսմարկի առաջարկութիւններին, այս անգամ էլ հաստատեց նրա առաջարկու-թիւնը կոմս Լացֆելդի մասին, բայց յե-տոյ, ինչպէս պատմում են, մի բարեկամա-կան նամակ գրեց Բիսմարկին, որով նա մատնացոյց էր լինում այս դժուարու-թիւնների վրա, որոնց կոմս Լացֆելդը կա-րող է պատահել բարձր շրջանների մէջ: Հասկանալի է, որ այս հանգամանքները ի նկատի ունենալով, ինքը կոմս Լացֆելդին էլ առանձին ցանկութիւն չունի վարել ի-րան առաջարկած պաշտօնը և նախագա-սում է դեսպանի իր պաշտօնը Կ. Պօլսի մէջ, որի համար աւելի մեծ առիթ է ըս-տանում, ինքը աւելի հանգիստ է և մա-նաւանդ Կ. Պօլսի մէջ նա շատ լաւ զիրք ունի: Միւս կողմից պէտք է նկատել, որ իշխան Բիսմարկ չէ սիրում հրաժարվել այն բանից, որ նա մի անգամ առաջարկել է: Այսպէս թէ այնպէս կոմսի վիճակը կորոշ-վի այն ժամանակ, երբ նա Բելլիկ կը հասնի:

Իշխան Բիսմարկի լրագիրներէ մէկը նու-րերումս հրէական հարցի վերաբերու-թեամբ մի յօդուած հրատարակեց, որի մէջ անց են կացրած իշխանի հայացքները այդ հարցի վրա: Բողոքածի առաջին մասը վճռողականապէս դատաւարտում է Շոտ-կերի հայացքները, այնպէս որ բոլոր հրէա-ները չեն կարող յօդուածի այդ մասի հետ չը համաձայնվել, բայց միւս բաժնի մէջ դուրս է բերված գերմանական աւետարա-նական սկզբունքը դաւանութիւնների, զի-տութեան, արհեստի և պետական կեանքի

վերաբերութեամբ: Բողոքածի կարճառօտ բովանդակութիւնը հետեւեալն է. «Հրէա-ները իրաւաբանական և հասարակական կող-մից կարող են քրիստոնեաների հետ հաւասար իրաւունքներ վայելել, բայց պէտք է որ նը-րանք մասնակցեն գերմանական ժողովրդի կա-ռավարութեանը»: Ուրեմն յօդուածի համե-մատ հրէաներին վարչական պաշտօններ չը պէտք է տալ: Այսպիսով այդ յօդուածը աւելի շատ է պահանջում, քան թէ հա-կահրէական յայտնի բողոքագիրը, որի հա-մեմատ հրէաներին չը պէտք է տալ վար-չական միայն մի քանի պաշտօններ: Այդ յօդուածը երկու կողմերին էլ հակառա-կում է, թէ Շոտկերին, թէ Վիրխովին և ի՞նչ հարցն էլ այդ ուղղութիւնը ստա-նայ, նա աւելի էլ կը խրճրվի:

Հրէաների դէմ ցոյցերը շարունակվում են: Համալսարանի մէջ, երբ մի կնքված հրէայ համարձակվեցաւ պրոֆեսոր Տրէյչ-կէի հակառակ կարծիքներ յայտնել, ահա-զին աղմուկ և անկարգութիւններ սկսվե-ցան: Այսպիսի պայմաններով շրջապատ-ված հրէական հարցը հետզհետէ ան-հանգստացնող բնաւորութիւն է ստանում և այժմ դժուար է նախատեսել, թէ նա ի՞նչ տեսակ վախճան կունենայ:

ՖՐԱՆՍԻԱ

«République Française» լրագրի յօ-դուածների համեմատ Ֆրանսիական քաղա-քագէտները հետեւեալ տեսակետից են նա-յում արեւելեան գործերի վրա: Մենք Ֆը-րանսիացիներս միայն մի շահ աչքի առաջ ունենք և մեր յարաբերութիւնների ժա-մանակ օտար պետութիւնների հետ միայն խաղաղութեան պահպանելը պէտք է ի նկատի առնենք: Մենք վճռել ենք ոչ թէ միայն ինքներս պատերազմ չը սկսել, այլ մեր ուղղակի շահերը պահանջում են, որ Եւրոպայի մէջ ոչ մի թնդանօթ չարձակվի: Եւրոպայի մէջ մի որ և է պատերազմի ըս-կսվելուց յետոյ կարող է եւրոպական հա-ւասարակշռութիւնը խանգարվել և այնպի-սի անցք կարող է պատահել, որ մենք ստիպված կը լինենք դաւաճանել մեր չէ-զոքութեան և ինքներս պատերազմի մէջ խառնվել: Մենք պէտք է աշխատենք, որ այսպիսի բան չը պատահի և զրա առաջն առնելու համար պէտք է մասնակցենք եւ-րոպական համաձայնութեանը և այնպիսի դեր խաղանք, որ խաղաղութիւն պահպան-վի և որ ամենքը հասկանան, թէ մեր նը-րաւատորմը խառնեց միացեալ նաւատորմի հետ: Եթէ մեր նաւատորմը չերեւար Գուլ-ցիների մօտ, այնտեղ ոչ ոք չէր գնայ, բայց զրահակիր նաւեր կերեւային Գարդա-նիկեան նեղուցի մէջ:

Ֆրանսիական սենատի նոյեմբերի 30-ի նիստին, երբ քննվում էր արտաքին գոր-ծերի միջնորդութեան բերդեփոխ, դուքս Բոլլի յայտնեց, որ ժամանակ է վերադառ-նալ Թիւրի և Մակ-Մահօնի քաղաքականու-թեանը: Անհրաժեշտ է այնպիսի քաղաքա-կանութեան հետեւել, որ պահպանէր Ֆը-րանսիայի իսկական շահերը: Ֆրանսիան պէտք է հեռու մնայ խրճրված գործերից և նրա քաղաքականութիւնը պէտք է ա-ղատ և չէզոք լինի: Ֆրանսիան հարց բար-ձրացրեց Բուսնաւոսանի օգտին ծովային ցոյց անելու մասին, բայց այդ հարցի վրա մի-այն Ֆրանսիական շահերի տեսակետից պէտք է նայել: Բայց եթէ մի անձնաւո-

րութիւն (գամբետտա) կայ, որ կառավա-րում է մեր միջնորդութիւնը, ուրեմն Ֆը-րանսիան Եւրոպայի հաւատարմութեանց կը զրկվի: Արտաքին գործերի նախկին միջնո-րդ Ֆրէյսիէն ասաց, որ շատ բնական էր Ֆրանսիայի համակրութիւնը դէպի Բու-նաստանը: Չերիօգորիան պաշտպանելու հա-մար գործադրած միջոցները ոչ թէ Թիւր-քիայի դէմ էին ուղղված, այլ այբանական ապստամբ խումբերի դէմ: Ֆրէյսիէն մատ-նացեց եղաւ, որ պետութիւնները գրեթէ միաձայն որոշեցին Բուսնաւոսանի սահման-ները:

«ՄՇԱԿ» ՀԵՌԵՐԻՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 2 դեկտեմբերի. «Пра-вит. Вѣстн.» լրագրի մէջ տպված է Բարձրագոյն հրովարտակ իշխան Ուրեն-բուրգսկու անունով դեկտեմբերի մէկին նրա 50 ամեայ յօբելեանի լրանալու առիթով: Գօրպատի ուսումնական շրջանի հոգաբար-ձու նշանակված է սենատոր բարոն Շու-կեւերդ:

ԲԵՂԳԻՎ, 1 դեկտեմբերի: Բնակիչները տօնում են կառավարչական վերանորոգող կու-սակցութեան յաղթութիւնը ընտրութիւն-ների ժամանակ: Գինուորական երաժշտու-թեան խումբերը ածում են փողոցների վրա:

ԼՕՆԻՕՆ, 1 դեկտեմբերի: Միջնորդների երէկվայ նիստի ժամանակ դեռ չէ վճռված, թէ ինչ միջոցներ պէտք է գործադրել իրանդիայի վերաբերութեամբ: Կառավա-րութիւնը այսօր կը կայացնի վերջնական վճիռը:

ՍՈՒԲՍՈՒ, 2 դեկտեմբերի: Այստեղ հա-սած չերիօգորիական պատգամաւորը Մակ-նովիչ Լեշկովիցայի և Կարիմայի վերաբե-րութեամբ հարցը վճռելու համար, ու-րոնց թիւրքերը հրաժարվում են յանձնել չերիօգորցիներին, և համաձայնութիւն կա-յացնելուց յետոյ վերադարձաւ, հրաժար-վելով ստորագրել յայտարարութիւնը Գուլ-ցիների նահանգը վրաւերու մասին:

Կ. ՊՕԼԻՍ, 2 դեկտեմբերի: Պարսկաստա-նը Բ. Գունից վարձատրութիւն է պահան-ջում քրեւդերի վերջին արշաւանքի հա-մար:

ԼՕՆԻՕՆ, 2 դեկտեմբերի: Միջնորդների խորհուրդը երէկ հետեւեալ վճիռը կայաց-րեց: Հարկաւորութիւն չը կայ իրանդիայի կատարող իշխանութեանը իրաւունք տալ գործող օրէնքները չափազանցանելու հա-մար: Միջնորդների խորհուրդը անհրա-ժեշտ չէ համարում հրաւիրել պարլամեն-տը խիստ միջոցներ գործադրելու համար: Խորհուրդը վճիռ կայացրեց, որ եթէ իր-լանդական գործերը չը լաւանան, պահան-ջել պարլամենտից Habeas-corpus օրէն-քի դադարեցնելը և խիստ միջոցների գոր-ծադրելը կայուածական վերանորոգութիւն-ներ մտցնելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 2 դեկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի ար-ժէ 95 ռ. 25 Կ., երկրորդ 92 ռ. 62 Կ., երրորդ 93 ռ. 25 Կ., չորրորդ 92 ռ. 75 Կ., ներքին 5% առաջին փոխառու-թեան տոմսակը արժէ 223 ռ. 75 Կ., երկ-րորդ 217 ռ. 25 Կ., արեւելեան առաջին փո-խառութեան տոմսակը արժէ 90 ռ. 62 Կ., երկրորդ 90 ռ. 62 Կ., երրորդ 90 ռ. 62 Կ., ոսկի 8 ռ.: Ռուսաց 1 ռուբլ լօնդօնի վրա արժէ 24,53 պէնս, Ամստըրդամի վրա 124 պէնս, Ռուսաց 100 ռ. Գերմանիայի վրա արժէ 209 մարկ, Փարիզի վրա 259 Ֆրանկ:

Խաղաղութիւն—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.